



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ «Պրոբլեմային ուսուցման մեթոդաբանությունը,
և կիրառումը առարկայի դասավանդման գործընթացում»

Առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Մուրադյան Ռուզաննա

Ուսումնական հաստատություն՝ Խ.Աբովյանի անվան թիվ 84 հիմնական
դպրոց

Երևան 2022

Բովանդակություն

Չետագոտական աշխատանք	3
Ներածություն	4
Պրորբլեմային ուսուցման մեթոդաբանությունը և կիրառումը առարկայի դասավանդման գործընթացում	6
Ինչի՞ մասին ես ուզում սովորել	6
Ո՞րն է թեման կամ հիմնախնդիրը	8
Եզրակացություն	15
Օգտագործված գրականության ցանկ	16

Հետազոտական աշխատանք

Թեմա- Պրոբլեմային ուսուցման մեթոդաբանությունը և կիրառումը առարկայի դասավանդման գործընթացում

Ինչի՞ մասին ես ուզում սովորել- Ինչ է պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիան և ինչքանով է այն արդյունավետ:

Ո՞րն է թեման կամ հիմնախնդիրը- Ինչպես ուսուցման մյուս տեխնոլոգիաները, պրոբլեմային ուսուցումը ևս նպատակաուղղված է կրթության որակի բարձրացման խնդրի լուծմանը, որն իրականացվում է բարձրագույն ուսումնական հաստատությունում ուսուցման գործընթացի կազմակերպման նորարարական միջոցների օգնությամբ:

Ի՞նչ գիտես տվյալ թեմայի կամ հիմնախնդրի մասին- Աշխատանքում դիտարկվել է ուսուցման մեթոդի ընտրության հարցը՝ որպես մարդու հոգեբանական գործունեության բացատրության ամենակարևոր խնդիրներից մեկը: Նկարագրվում են մեթոդի վրա աշխատելու փուլերը՝ խթանման, իմաստավորման և կշռադատման համադրությունները: Շեշտը դրվում է պրոբլեմների լուծման, վերլուծության, իմաստավորման, հետևողական ուսումնասիրության և իմացածը գործնականում կիրառելու կարողությունների վրա: Բերվում է պրոբլեմային ուսուցման օրինակ հայոց լեզվից:

Խաչվող հասկացությունները՝

- ❖ Ուսուցման տեխնոլոգիա և մեթոդ
- ❖ Փոխգործուն և նորարարական մեթոդներ

Հետազոտության թեմային առնչվող բնագավառները՝

1. Մանկավարժություն
2. Հայոց լեզու
3. Հայ գրականություն

Ներածություն

Թեմայի կարևորությունը: Ուսումնական գործընթացի զարգացման, կատարելագործման ուղիների որոնումը հանգեցնում է մանկավարժական տարբեր տեխնոլոգիաների մշակման, որոնց շարքում է նաև պրոբլեմային ուսուցումը, այսինքն՝ ուսուցման գործընթացի այնպիսի կազմակերպումը, որը սովորողին ստեղծված իրավիճակը գիտակցելու, առաջադրված խնդրում եղած հակասությունները հայտնաբերելու, չիմացածն ու անհայտը որոնելու, խնդիրը լուծելու և վերջնական նպատակին հասնելու հնարավորություն է ընձեռում: Նշված տեխնոլոգիայի եռությունը պրոբլեմային իրավիճակի ստեղծումն է, որը նպաստում է ուսանողների մտածողության մակարդակի բարձրացմանը:

Մերօրյա տեղեկատվական դարաշրջանում սովորողները ամրապնդման ենթակա նյութի ծավալների աճին զուգահեռ հաճախ ոչ թե ամրապնդում, այլ պարզապես մտապահում են յուրացման համար նախատեսված նյութերը, այն էլ՝ շատ կարճ ժամանակով և միայն դասահարցմանը կամ քննությանը պատրաստ լինելու համար:

Դասընթացում թեմային հատկացված ժամանակահատվածի սահմանափակությունը, ուսանողների թիվը հնարավորություն չեն տալիս դասախոսին պարզելու՝ արդյո՞ք թեման յուրացվել է յուրաքանչյուր սովորողի կողմից, հարցման ենթարկված ուսանողը իրականում ամրապնդե՞լ է թեման, թե՞ պարզապես կարողանում է վերարտադրել մտապահածը:

Բացի դրանից՝ լսարանային պայմաններում նույն թեման միևնույն ժամանակահատվածում և միևնույն մեթոդներով, ընդհանուր կամ միևնույն ուսումնական ծրագրերով ուսումնական խմբի յուրաքանչյուր սովորողի կողմից չի կարող յուրացվել նույն աստիճանով, քանի որ տարբեր ուսանողներ ունեն տարբեր ընդունակություններ: Ուստի դասախոսները հաջորդ նյութին անցնելուց առաջ բավարարվում են սովորողների կողմից տվյալ թեմայի յուրացման աստիճանի գնահատմամբ: Նմանօրինակ խնդիրների լուծման արդյունավետ ուղիներ են առաջարկում ուսուցման նորարարական բազմաթիվ տեխնոլոգիաներ, որոնցից մեկն էլ պրոբլեմային ուսուցումն է:

Չետագոտության նպատակը: Չետագոտության նպատակն է մեթոդաբանորեն հիմնավորել պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիայի կիրառման առանձնահատ-կությունները առարկայի դասավանդման ընթացքում՝ մեթոդական քայլաշարի միջոցով ընդգծելով թեմայի ուսուցման ժամանակ երևան եկող խնդիրները, դժվարությունները և առաջարկելով դրանց լուծման ուղիներ:

Չետագոտոլթյան օբյեկտը և առարկան: Չետագոտոլթյան օբյեկտ է հանդիսացել հայոց լեզվի դասընթացը, իսկ առարկան՝ պրոբլեմային ուսուցման մեթոդաբանությունը և կիրառումը հայոց լեզվի դասավանդման գործընթացում:

Չետագոտոլթյան կառուցվածքը: Չետագոտական աշխատանքը բաղկացած է ներածությունից, հիմնական մասից, եզրակացությունից, ինչպես նաև օգտագործված գրականության ցանկից:

Պրոբլեմային ուսուցման մեթոդաբանությունը և կիրառումը առարկայի դասավանդման գործընթացում

21-րդ դարում մարդը պետք է ունենա ճկուն մտածողություն, որպեսզի կարողանա լուծումներ գտնել ցանկացած իրավիճակում: Պարզ է, որ մարդու միտքը պետք է մարզել դեռևս դպրոցական հասակում: Նոր տեղեկատվական տեխնոլոգիաների դարում ուսուցման առջև դրված են նոր մարտահրավերներ՝ սովորողներին տալ ոչ միայն գիտելիքներ, այլև ապահովել նրանց ճանաչողական հետաքրքրությունների և կարողությունների ձևավորումն ու զարգացումը, ստեղծագործական մտածողությունը, ինչպես նաև ինքնուրույն մտավոր աշխատանքներ իրականացնելու կարողությունն ու հմտությունը:

Աշակերտակենտրոն ուսուցում իրականացնելու համար անհրաժեշտ է դասընթացը կազմակերպել այնպես, որ աշակերտը հայտնվի դասընթացի կենտրոնում, ձգտի ինքնուրույն ձեռք բերել հուզող հարցի պատասխանները, սովորի օգտվել գրականությունից, կարողանա արագ գտնել և վերամշակել անհրաժեշտ տեղեկությունները: Այսօրվա կրթության առաջնային խնդիրն է պատրաստել ինքնակրթությամբ զբաղվելու ունակ մարդ, ստեղծագործող անհատ: Երբ որոշում ենք, թե ուսուցանելիս ինչ մեթոդներ ընտրենք, կարևոր է հիշել, որ մեթոդները և հմտությունները միայն միջոցներ են նպատակին հասնելու համար: Մեթոդը հունարեն «մեթոդոս» բառն է, որ նշանակում է ուղի, եղանակ: Ուսուցման մեթոդներ ասելով՝ հասկանում ենք ուսուցչի և աշակերտների փոխադարձաբար կապված գործունեության եղանակները, որոնք ուղղված են ուսուցման խնդիրների լուծմանը: Մեթոդը ուսուցչի համար՝ դասավանդման, իսկ աշակերտների համար գիտելիքները, կարողությունները և հմտությունները յուրացնելու եղանակ է, միաժամանակ՝ սովորողների գիտական աշխարհայացքը ձևավորելու, նրանց ընդունակություններն և ստեղծագործական գործունեությունը զարգացնելու եղանակ¹:

Ինչի՞ մասին ես ուզում սովորել

Ուսուցման մեթոդները բազմազան են: Ուսուցման մեթոդների ընտրության ժամանակ չափազանց կարևոր նշանակություն ունի ուսումնական նյութի բովանդակությունը: Անհրաժեշտ է հաշվի առնել նաև սովորողների տարիքային և անհատական առանձնահատկությունները, շրջապատի պայմանները, սովորողների մտավոր մակարդակները, դաստիարակվածության աստիճանը և այլ հանգամանքներ: Պրոբլեմային ուսուցումը ակտիվ մեթոդներից է, որը ոչ թե նախատեսում է ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքների մատուցում,

¹ Балаев А. А., Активные методы обучения. М., 2006

մտապահում և վերարտադրություն, այլ գիտելիքների և հմտությունների ձեռք բերում, որն ուղղված է հետագայում կոնկրետ խնդիրների լուծմանը:

Ուսուցիչը դադարում է լինել զուտ տեղեկատվություն հաղորդող. նա ճշգրտված տեղեկությունը ոչ թե սկզբից հաղորդում է աշակերտին, այլ ստեղծում է իրավիճակներ, որ վերջինս ինքնուրույն ձեռք բերի այն՝ ուղղորդելով նրան ճշմարիտ գիտելիք ձեռք բերելու գործընթացում: Այսպիսով՝ նա ստանձնում է աշակերտների օգնականի դերը և հանդիսանում է տեղեկատվության աղբյուր:

Գ. Կ. Սելևկոն իր «Ուսուցման տեխնոլոգիաների հանրագիտարան» աշխատության մեջ անդրադարձել է պրոբլեմային ուսուցման առանձնահատկություններին՝ այն դիտարկելով որպես ուսուցման ակտիվ տեխնոլոգիա²: Հեղինակը մանրամասնորեն վերլուծում է տարբեր մանկավարժների տեսակետները պրոբլեմային ուսուցման վերաբերյալ:

Պրոբլեմային ուսուցման տեսության զարգացման գործում մեծ ներդրում են ունեցել Մ. Ի. Մախմուտովը, Ա. Մ. Մատյուշկինը, Ա. Վ. Բրուշլինսկին, Տ. Վ. Կուդրյավցևը, Ի. Յա. Լերները, Ի. Ա. Իլիցկայան, Ս. Ա. Ռուբինշտեյնը, Լ. Ս. Վիգորսկին, Ա. Ն. Լեոնտևը: «Պրոբլեմային ուսուցում. անցյալը, ներկան, ապագան» կոլեկտիվ մենագրությունում մանրամասնորեն ներկայացվում է ուսուցման նշված տեխնոլոգիայի զարգացման ողջ ընթացքը³:

Է. Չավարյանն ընդգծել է տարբեր առարկաների ուսուցման ժամանակ խնդրահարույց իրավիճակների ստեղծման մեթոդների և խնդրի ճանաչողական առաջադրանքների բարդության գնահատման չափանիշների կարևորությունը⁴: Մ. Դավթյանի և այլ հեղինակների «Կրթակարգի մշակման և ինտեգրման մոտեցումներ» աշխատությունում պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիան դիտարկվում է որպես ուսուցման արդիական մոտեցում: Այսօր անհրաժեշտ է սովորողին ցույց տալ նյութի արդիականությունն ու կիրառելիությունը առօրյա կյանքում, որպեսզի նա հասկանա, թե ինչ իմաստ ու նշանակություն ունի նշված առարկայի շրջանակներում ստացած գիտելիքը հասարակական կյանքում⁵:

Գ. Ե. Ղույունյանը որպես ամբողջական համակարգ առանձնացում է Մ. Ի. Մախմուտովի կողմից առաջարկված պրոբլեմային ուսուցման երկու մեթոդներ՝ իրենց տարատեսակներով.

² Селевко Г. К., Энциклопедия образовательных технологий. В 2-х т., т. 1, Москва: «Народное образование», 2005 էջ 195

³ Проблемное обучение: прошлое, настоящее, будущее: Коллективная монография: в 3 кн., кн. 1, под ред. Е. В. Ковалевской, Нижневартовск: Изд-во Нижневарт. гуманит. ун-та, 2010.

⁴ Չավարյան Է., Կենսաբանության դպրոցական դասընթացում պրոբլեմային ուսուցման կիրառման օրինակներ, «Մանկավարժություն» գիտամեթոդական վերլուծական ամսագիր, Երևան, 2008, թիվ 3/4, էջ 44-45

⁵ Դավթյան Մ. և ուրիշներ, Կրթակարգի մշակման և ինտեգրման մոտեցումներ, Երևան, 2004, էջ 7

1. ուսուցչի կողմից գիտելիքների պրոբլեմային շարադրման մեթոդ,
2. սովորողների ինքնուրույն ճանաչողական գործունեության կազմակերպման մեթոդ⁶:

1. Ուսուցչի կողմից գիտելիքների պրոբլեմային շարադրման մեթոդ: Պրոբլեմային շարադրանքը սովորական շարադրանքից տարբերվում է նրանով, որ այս դեպքում ուսուցիչը բացահայտում է անհայտի որոնման ուղիները, ցույց տալիս այն դժվարությունները, որ հանդես են գալիս մտածողության ընթացքում:

Շարադրանքը պրոբլեմային է, երբ պարունակում է պրոբլեմային հարց: Այս դեպքում ուսուցիչը բացատրում է փաստացի նյութը, սովորողների ուշադրությունը կենտրոնացնում նրա վերլուծման վրա: Նման դեպքում սովորողներն ինքնուրույնաբար որոնում են պրոբլեմային հարցի լուծման ուղիներն ու միջոցները, առաջադրում հարցեր, կատարում գիտական ենթադրություններ: Պրոբլեմային շարադրանքն այն է, որ պարունակում է ճանաչողական դժվարություն, հարց կամ խնդիր, որոնք առաջացնում են պրոբլեմային իրավիճակներ, և որոնց հաղթահարման համար սովորողները կատարում են որոնողական, հետազոտական աշխատանքներ:

Ռ՞րն է թեման կամ հիմնախնդիրը

Ուսուցման ժամանակակից մեթոդները նոր պահանջներ են առաջադրում հայոց լեզվի ուսուցման գործընթացում: Մի կողմից ուսուցման գործընթացում հաշվի են առնվում տեսական նյութը սովորողներին դյուրընկալ դարձնելու, համապարփակ ուսուցանելու, համապատասխան մեթոդ ընտրելու, մյուս կողմից՝ սովորողների՝ բառաձևերը ճշգրտորեն կազմելու, սխալ բառաձևեր չկիրառելու, բառագործածության սխալներից զերծ մնալու գործոնները: Պրոբլեմային ուսուցման միջոցով հնարավոր է ոչ միայն արդյունավետորեն իրականացնել տեսական նյութի ուսուցումը, այլև սովորողի մոտ ստեղծել ինքնազարգացման հմտություններ: Այդ ամբողջ գործընթացը հիմնված է առաջնային՝ գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման ու զարգացման և երկրորդային՝ երկարաժամկետ անհատական կարողությունների զարգացման արդյունքների գիտակցված ընտրության վրա: Հետևաբար պրոբլեմային տեխնոլոգիայով իրականացվող դասերի արդյունավետությունը շատ ավելի բարձր կլինի, եթե սովորողը կարողանա ինքնուրույն տիրապետել գիտելիքներին, և մանկավարժը լոկ դեկավարի այդ գործընթացը վերահսկմամբ⁷: Ներկայումս լայնորեն կիրառվող առցանց և խառը կամ

⁶ Ղուլումյան Գ. Ե., Մանկավարժություն: Ղասագիրք բուհերի համար: Երկու գրքով: Գիրք I, 2-րդ հրատ. Եր., «Չանգակ-97», 2017, – էջ 454

⁷ Осмоловская И. М., Организация дифференцированного обучения в современной общеобразовательной школе, М., Воронеж, 1998. էջ 54

հիբրիդային եղանակով ուսուցման դեպքում ևս պրոբլեմային ուսուցումը կյուլթի բազմաշերտ ընկալման հրաշալի հնարավորություններ է ընձեռում:

Պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիան հիմնվում է հետևյալ գաղափարի վրա. պրոբլեմային իրավիճակների կիրառումը սովորողին կանգեցնում է կանխատեսված դժվարությունների առաջ, որոնց հաղթահարումը պահանջում է ստեղծագործական որոնում և ստիպում է սովորողին մտածել, որոնել, քննարկել, ինչն էլ նպաստում է նրա իմացական հետաքրքրությունների զարգացմանը: Ուսանողը պետք է ինքնուրույն որոնի խնդրի լուծումը, իսկ դասախոսը պարտավոր է ղեկավարել նրա ուսուցման գործընթացը՝ մոտիվացնելով, կազմակերպելով, համակարգելով, ուղղորդելով և վերահսկելով: Պրոբլեմային ուսուցումը հնարավորություն է ընձեռում, որ սովորողի մոտ ձևավորվեն ինքնակրթության հմտություն, նպատակադրման կարողություն, ձևավորվեն և զարգանան համագործակցային այնպիսի օգտակար հմտություններ, ինչպիսիք են՝ ինքնազնահատումը, ինքնավերահսկումը, փոխադարձ վերահսկումը: Պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիան ապահովում է նաև ուսուցման անհատականացում՝ ըստ ուսուցման բովանդակության, յուրացման արագության, ինքնուրույնության մակարդակի, վերահսկման եղանակների: Հայերենի քերականության առանձնահատկությունների ուսուցումը ժամանակակից տեխնոլոգիաներով ու մեթոդներով կարող է ուղենշային լինել սովորողների՝ հայերենի քերականական համակարգի յուրահատկությունների ընկալման առումով:

Ուսումնական պրոբլեմի առաջադրումը մեծ մասամբ կախված է ուսուցչի հմտությունից, առարկայական մեթոդամանկավարժական պատրաստվածությունից: Պրոբլեմային յուրաքանչյուր հարց պետք է սովորողների մեջ առաջացնի հետաքրքրություն և մտավոր գործունեության լարվածություն: Պրոբլեմային հարցին ներկայացվում են հետևյալ պահանջները.

- ◆ պետք է կապ ունենա նախկին յուրացրած իմացությունների հետ,
- ◆ իր մեջ պարունակի ճանաչողական դժվարություն,
- ◆ կապված լինի սովորողների զգացումների հետ,
- ◆ առաջացնի իմացածի անբավարարություն, նորը հայտնաբերելու ձգտում:

Պրոբլեմը պետք է լուծվի նախածանոթ գիտելիքները համադրելու և հակադրելու, տրամաբանելու և ստեղծագործելու ճանապարհով: Տարբերակվում է պրոբլեմային շարադրման երեք տեսակներ.

ա) Պրոբլեմային շարադրման մեթոդ: Այս մեթոդի կիրառման դեպքում ուսուցչի կողմից պրոբլեմային հարցերի համակարգի օգնությամբ սովորողները հնարավորություն են ունենում ուսումնասիրվող հարցերը ինքնուրույն կշռադատել: Տեղեկատվություն հաղորդող և բացատրական մեթոդների միջոցով ուսուցիչը

ստեղծում է պրոբլեմային իրադրություն: Ուսուցիչը ինքը բացատրում է նյութը՝ անընդհատ ստեղծելով իրար հաջորդող պրոբլեմային իրադրություններ: Աշակերտների ուշադրությունը բևեռում է նյութին և նրանց ներգրավում է առաջադրված հարցերի քննարկման գործընթացում: Այս մեթոդի կիրառման դեպքում չպետք է ակնկալել սովորողների շատ մեծ ճանաչողական ակտիվություն:

բ) Ցուցադրական շարադրման մեթոդ: Այս մեթոդի կիրառմամբ կարևորվում է հարցի ծագումնաբանությունը⁸: Եթե նյութը հնարավորություն չի տալիս վերականգնելու հասկացության բացահայտման պատմական ուղին, այդ դեպքում ուսուցիչը փորձում է իր դասողությունների միջոցով, այսինքն՝ տրամաբանական վերլուծությամբ վերականգնել գիտական որոնումների և հայտնագործման անհայտ դրվագները: Այս ճանապարհով ուսուցիչը կարծես սովորողներին դարձնում է գիտական որոնման մասնակից:

գ) Երկխոսական շարադրման մեթոդ: Այս մեթոդի կիրառման դեպքում երկխոսություն է առաջանում ուսուցչի և սովորողների միջև: Աշակերտները համատեղ եզրահանգումներ են անում՝ պրոբլեմային հարցը ավարտին հասցնելով: Ուսուցչի խնդիրն է, բարդ պրոբլեմներն այնպես ձևակերպել, որ ապահովվի սովորողի ակտիվ մասնակցությունը դրանց քննարկմանը: Ստեղծելով պրոբլեմային իրադրություններ՝ նա խթանում է սովորողների ակտիվ ճանաչողական գործունեությունը: Սովորողներն «օգնում են» ուսուցչին ընդհանրացնել փաստերը և եզրակացություններ կատարել:

2. Սովորողների ինքնուրույն ճանաչողական գործունեության կազմակերպման մեթոդ: Այս մեթոդը ապահովում է սովորողների ուսումնական գործունեության առավել բարձր արդյունավետություն, երբ սովորողները ստեղծագործական կամ կիսաստեղծագործական բնույթի աշխատանքներ են կատարում: Դրանք հետևյալներն են.

1) Էվրիստիկական ստեղծագործությունների մեթոդ, որը ենթադրում է գիտելիքների հաղորդում զրույցի, առաջադրանքների և խնդիրների ձևով: Մեթոդի արդյունավետությունը պայմանավորված է բացատրության, հետաքրքրությունների ակտիվացման, տարբեր հնարների և սովորողի ինքնուրույն ուսումնական աշխատանքների զուգակցությամբ: Հարցի պատասխանի բացահայտումը կատարում են սովորողները: Չուգակցման արդյունավետության պայմանները համարվում են հետևյալները.

⁸ Ղույունյան Գ. Ե., Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով: Գիրք I, 2-րդ հրատ. Եր., «Չանգակ-97», 2017, էջ 455

ա) նոր գիտելիքների հաղորդման ընթացքում պրոբլեմային խնդիրների և առաջադրանքների հետևողական, անընդհատ կիրառում,

բ) ուսումնական առաջընթացների «շղթայի» կիրառման գույքակցում այդ խնդիրների վերլուծությունն ապահովող հարցերի հետ,

գ) ճանաչողական խնդիրների օգտագործում փոքր հետազոտական աշխատանքների ձևով,

դ) բանավեճ ճանաչողական-պրոբլեմային խնդիրների շուրջ: Երբ աշակերտն ինքն է կատարում եզրահանգում, հասնում վերջնակետին, արդյունավետությունն ակնհայտ է: Սակայն այս մեթոդի կիրառումը դժվար է և հնարավոր է միայն որոշակի թեմաներ ուսուցանելիս:

2) Հետազոտական մեթոդ, որը համարվում է առավել արդյունավետ պրոբլեմային մեթոդ: Այս մեթոդը օգտագործվում է բարձր պրոբլեմայնության առաջադրանքներ կատարելիս, և հարցի հետազոտման բոլոր փուլերըն աշակերտները պետք է անցնեն ինքնուրույն: Սովորողներն իրենք են կատարում փաստերի հավաքումը (դիտումներ, փորձեր, աշխատանք գրքով և այլն)⁹:

7-րդ դասարանում «Հայոց լեզու» ուսումնական առարկայից ուսումնասիրվում է «Բայ» թեման: Խնդրահարույց ենթաթեմա է «Սահմանական եղանակի անցյալ կատարյալի» ուսուցումը: Դասագրքում շատ համառոտ է ներկայացված թեման: Նշված է միայն, որ դրական խոնարհման հարացույցում անցյալ կատարյալ ժամանակաձևն արտահայտվում է բոլոր բայերի «անցյալ կատարյալի կամ երկրորդ հիմք +ի, իր, օ, ինք, իք, ին, դիմաթվային վերջավորություններ» կաղապարով:

Այսինքն՝ Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կազմվում է անորոշ դերբայի հիմքին ավելացնելով եցի, եցիր, եց, եցինք, եցին, վերջավորությունները: Ա խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կազմվում է անորոշ դերբայի հիմքին ավելացնելով ացի, ացիր, աց, ացինք, ացիք, ացին վերջավորությունները:

Եվ մեկ նախադասությամբ նշված է, որ ածանցավոր և անկանոն որոշ բայերի համար անցյալ կատարյալ ժամանակաձև արտահայտվում է «բայի երկրորդ հիմք + ա, ար, ավ, անք, աք, ան դիմաթվային վերջավորություններ» կաղապարով: Այս ամենը այն դեպքում, երբ ծրագրում ընդգրկված չէ «Անկանոն բայեր» թեման: Ահա այստեղ է, որ առաջանում է պրոբլեմային ուսուցման անհրաժեշտությունը:

Թեման յուրացնելու համար աշակերտները վերհիշում են բայի կազմությունը, բայակերտ ածանցները և բայածանցները: Զանի որ անորոշ դերբայը համարվում է

⁹ Ղուկունյան Գ. Ե., Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով: Գիրք I, 2-րդ հրատ. Եր., «Չանգակ-97», 2017, էջ 456

բայի ելակետային ձև, ուստի բայակերտ ածանցներն են ալ և ել ձևույթները, որոնք այլ բառերից և բայարմատներից կերտում են բայեր:

Օրինակ՝ ջուր-ջրել, կրկինկրկնել, դանդաղ-դանդաղել և այլն:

Հաճախ էլ, ալ ձևույթների հետ միասին բայերի կերտմանը մասնակցում են նաև բայածանցները՝ սուկածանցներ (ան, են, ն, չ), բազմապատկականները (ատ, ոտ, կոտ, տ և այլն), կրավորական (վ) և պատճառականները (ացն, եցն ցն): Օրինակ բարձր-ան-ալ, բարձր-ացն-ել, փախ-չ-ել, փախ-ցն-ել և այլն¹⁰: Այս քայլից հետո անհրաժեշտ է պարզաբանել, թե ինչ է բայի հիմքը: Առաջադրվում են բայեր գրել, գրեցի, գրեցեք, որսալ, որսացեք, որսա, որսացող և այլն: Գտնում են հիմքերը՝ գր-ել, գրեց-ի, գրեց-եք, որս-ալ, որսաց-եք և այլն: Ապա առաջադրվում են ածանցավոր բայեր՝ կորչել, կորցնել, հիանալ ցատկոտել և այլն:

Կրկին առանձնացվում են հիմքերը՝ կորչ, կորցն, հիան, ցատկոտ: Աշակերտները եզրահանգում են՝ բայի անկատարի կամ առաջին հիմքը անորոշ դերբայի ել, ալ ձևույթից առաջ ընկած մասն է: Եթե տրված է անորոշ դերբայ, ապա անկատարի հիմք պետք է դիտել ել կամ ալ ձևույթից առաջ ընկած մասը: Սակայն պարզվում է, որ որոշ բայերում ել, ալ վերջավորությունից առաջ գտնվում են ածանցներ: Օրինակ՝ թռ-չ-ել, մեռ-ն-ել, փախ-չ-ել: Եզրահանգում են՝ բացի առաջին հիմքից կա նաև անցյալ կատարյալի կամ երկրորդ հիմք, որը ճիշտ որոշելու համար պետք է անպայման վերականգնել տրված բայի ելակետային ձևը՝ անորոշ դերբայը: Տրվում են նաև այլ բայեր՝ հիացնել, հիշեցնել, կորցնել:

Պարզվում է, որ ացն, եցն, ցն պատճառական ածանցավոր բայերի անցյալ կատարյալի հիմքը որոշելիս անորոշ դերբայի ել ձևույթն ընկնում է, իսկ ացն, եցն, ցն ածանցների ն-ին փոխարինում է հիմնակազմիչ ռ-ն՝ հիացնել-հիացր, հիշեցնել-հիշեցր, կորցնել-կորցր: Աշակերտները, դիտարկելով նաև սուկածանցավոր որոշ բայեր, եզրահանգում են, որ Ա խոնարհման ածանցավոր բայերի (դրանք կազմվում են ան կամ են սուկածանցներից) անցյալ կատարյալի հիմքը կազմվում է անորոշ դերբայի ալ ձևույթի կորստով և ան-են սուկածանցների ն-ն ց հիմնակազմիչ ձևույթով փոխարինելով: Օրինակ՝ հիանալ-հիաց, մոտենալ-մոտեց, զգուշանալ-զգուշաց, հագենալ-հագեց:

Որպես վերջնական տեղեկատվություն հայտնում են նաև, որ բայն ունի նաև երրորդ հիմք, որն անորոշ դերբայն է ամբողջությամբ: Այս ամենից հետո տրվում է զույգերով աշխատանք՝ խոնարհել կանոնավոր հարացույցից շեղվող բայերը: Պրոբլեմային ուսուցում կազմակերպվում է այնպիսի խնդիրների շուրջ, որոնք պարզ

¹⁰ Ասատրյան Մ. Ե., Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Գ (բայեղանակային ձևեր, մակբայ, շաղկապ, եղանակավորող բառեր, ձայնարկություն), Եր. համալս. հրատ., Եր., 1977, էջ 93

պատասխանով չեն լուծվում. կան հանգուցալուծման միջակցող տարբերակներ: Չնայած պրոբլեմային դասը կարող է կենտրոնացված լինել որոշակի առարկայի շրջանակներում, հետազոտվող խնդիրն ընտրվում է հենց այդ պատճառով, որ դրա հանգուցալուծման համար աշակերտը ստիպված լինի խորասուզվել բազմաթիվ առարկաների կամ նույն առարկայի այլ թեմաների ոլորտներում:

Այսպես՝ «Անցյալ կատարյալի» ուսումնասիրության ժամանակ աշակերտը պետք է մեկ անգամ ևս խորասուզվի «Բայի կազմությունը», «Ածանցավոր բայեր», «Բայի հիմքերը» թեմաների մեջ վերջնական եզրահանգման հասնելու համար: Իրական հետազոտությունը պահանջում է, որ աշակերտները վերլուծեն և սահմանեն խնդիրը, մշակեն վարկածներ և կանխատեսումներ անեն, տեղեկություններ հավաքեն և քննարկեն, անհրաժեշտության դեպքում փորձեր կատարեն, հետևություններ և եզրահանգումներ անեն:

Պրոբլեմային ուսուցումը աշակերտներից պահանջում է իրենց լուծումները ցուցադրող կամ բացատրող վերջնարդյունքի պատրաստում ցուցանմուշների կամ ներկայացման ձևով: Դա կարող է լինել պաստառ, տեսաժապավեն կամ համակարգչային ծրագիր: Աշակերտների պատրաստած ցուցանմուշները և ներկայացումները ցույց են տալիս նրանց կողմից յուրացված գիտելիքների չափը: Պրոբլեմային ուսուցումն ունի մի քանի առավելություններ.

ա. խրախուսում է համագործակցությունը և առաջադրանքների համատեղ կատարումը,

բ. պարունակում է տարրեր, որոնք ինչ-որ չափով հիշեցնում են արհեստանոցում աշխատող վարպետին աշակերտելու սկզբունքը, որի արդյունքում աշակերտն աստիճանաբար ձեռք է բերում անհրաժեշտ հմտություններ,

գ. աշակերտներին ներգրավում է իրենց ընտրած թեմայի շուրջ հետազոտություններում, որոնք աշակերտներին օգնում են հասկանալ և մեկնաբանել իրական աշխարհում տեղ գտած երևույթները և դրանց վերաբերյալ կերտել սեփական ընկալումը, ձևավորել ուրույն վերաբերմունք:

Աշակերտներն ի վերջո ձեռք են բերում հետագա կյանքում առաջադրանքներն ինքնուրույն կատարելու հմտություններ: Չույգերով կամ փոքր խմբերով աշխատելուց հետո ամբողջ դասարանի հետ քննարկվում են կատարված աշխատանքները: Արդյունավետ աշխատելու համար կարելի է մշակել հուշելու համակարգ: Դրանք կարող են լինել խմբի կանոններ կամ նշանների համակարգ, որի օգնությամբ պետք է ուղղորդել աշակերտներին, օգնել անցում կատարել մի առաջադրանքից մյուսին: Այդ կանոնները աշակերտներին կհուշեն, թե երբ է

անհրաժեշտ խոսել և երբ՝ ունկնդրել: Ուսուցիչները պետք է մշակեն յուրաքանչյուր օրվա կամ դասի աշխատակարգը և հայտնեն աշակերտներին:

Դասարանի ապակենտրոնացման դեպքում աշակերտներն ազատություն են ստանում մտքերի հետազոտության և ինքնարտահայտման համար: Ակնհայտ է, որ ոչ բոլոր աշակերտներն են օգտվում ընձեռված հնարավորությունից, սակայն, շփվելով ստեղծագործաբար լիցքավորված դասընկերների հետ, ոգևորության ականատես լինելով, նույնպես կներգրավվեն այդ ակտիվ գործընթացի մեջ:

Պրոբլեմային ուսուցման մոդելով առաջնորդվող ուսուցիչները գործուն մասնակցություն են ունենում աշակերտների հետազոտության խնդիր ընտրելու հարցում, քանի որ սա աշակերտներին ավելի է ոգևորում: Օրինակելի իրավիճակն առնվազն պետք է բավարարի հետևյալ հինգ չափանիշների.

- ❖ *Պետք է իրական լինի: Սա նշանակում է, որ խնդիրը պետք է խարսխված լինի ոչ թե գիտության տվյալ ճյուղի սկզբունքներին, այլ աշակերտի իրական կենսավորման:*
- ❖ *Խնդիրը պետք է որոշ չափով ոչ հստակ ձևակերպում ունենա, որպեսզի իր խորհրդավորությամբ ու խճճվածությամբ գրավի աշակերտին:*
- ❖ *Խնդիրը պետք է իմաստալից լինի և համապատասխանի աշակերտների մտավոր զարգացման մակարդակին:*
- ❖ *Խնդիրը պետք է բավարար չափով ընդգրկուն լինի, որպեսզի ուսուցիչը հնարավորություն ունենա իրագործել իր ուսուցողական նպատակը:*
- ❖ *Ցանկալի է, որ օրինակելի խնդրի լուծումը խմբային աշխատանք ներառի:*

Խնդրի ընտրությունը կատարելիս ուսուցիչը պետք է հաշվի առնի հետևյալ նկատառումները.

- Արդյո՞ք այդ իրավիճակը հետաքրքիր կլինի աշակերտների տվյալ խմբի համար:
- Այս խնդրի հետազոտումն իրագործելի՞ է և արդյոք հատկացված ժամանակն ու նյութատեխնիկական առկա պաշարներն արդյունավետ հետազոտություն վարելու հնարավորություն են ընձեռում:

Պրոբլեմային իրավիճակը պրոբլեմային ուսուցման կենտրոնական օղակն է: Այն աշակերտների համար ստեղծված հոգեկան լարված պահն է, որը լի է հակասութ-յուններով:

Եզրակացություն

Պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիան բովանդակում է պրոբլեմային իրավիճակների ստեղծման տարբեր եղանակներ, մեթոդներ, որոնք՝ որպես ուսուցման արդյունավետ հնարներ, առավել մատչելի ու նպատակային են դարձնում առարկայական գիտելիքի յուրացումը:

Հայոց լեզվի դասընթացում, հատկապես քերականության ուսուցման ժամանակ պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիան ենթադրում է նոր գիտելիքների, կարողությունների և հմտությունների մշակում և ամրապնդում, սովորողների ստեղծագործական մտածողության ու անձնային այլ որակների զարգացում: «Պրոբլեմային ուսուցման» մեթոդները ենթադրում են դասավանդողի կողմից պրոբլեմի առաջադրում, ձևակերպում, լուծում՝ ցույց տալով դրանց լուծման ուղիները:

Այս տեխնոլոգիայի էությունն այն է, որ դասավանդողը ցուցադրում է գիտական ճանաչողության, խնդիրների լուծման օրինակներ, արդյունքում ամրապնդվում ու յուրացվում են պրոբլեմային ուսուցման մեթոդներով ձեռք բերված գիտելիքները:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ասատրյան Մ. Ե., Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Գ (բայեղանակային ձևեր, մակբայ, շաղկապ, եղանակավորող բառեր, ձայնարկություն), Եր. համալս. հրատ., Եր., 1977, էջ 93
2. Դավթյան Մ. և ուրիշներ, Կրթակարգի մշակման և ինտեգրման մոտեցումներ, Երևան, 2004, էջ 7
3. Չավարյան Է., Կենսաբանության դպրոցական դասընթացում պրոբլեմային ուսուցման կիրառման օրինակներ, «Մանկավարժություն» գիտամեթոդական վերլուծական ամսագիր, Երևան, 2008, թիվ 3/4, էջ 44-45
4. Ղուկումջյան Գ. Ե., Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով: Գիրք I, 2-րդ հրատ. Եր., «Չանգակ-97», 2017, – էջ 454
5. Балаев А. А., Активные методы обучения. М., 2006
6. Осмоловская И. М., Организация дифференцированного обучения в современной общеобразовательной школе, М., Воронеж, 1998. էջ 54
7. Проблемное обучение: прошлое, настоящее, будущее: Коллективная монография: в 3 кн., кн. 1, под ред. Е. В. Ковалевской, Нижневартовск: Изд-во Нижневарт. гуманит. ун-та, 2010.
8. Селевко Г. К., Энциклопедия образовательных технологий. В 2-х т., т. 1, Москва: «Народное образование», 2005 էջ 195